

նամակի ձերում պատճենի, յօրինեալ շա-
րադրեցի զպատմութեանն զովեստ, եւ
զճառքս ներքողենի: Նկարեալ հաստա-
տեալ ի դեղ պատկերի դիմաց սոփեստի
սպիտակափայլ լուսափառ դաշտի քար-
տենիդ. մտրակեալ յընթացս սորա աս-
պարիսի զըթունս զըջիս, անշունչ խօսո-
ղիս անքայլ ընթացողիս, անձայն հնչո-
ղի, անդուլ պատմողի եւ անսայթաքելի
քարոզչի» եւն.:

Իսկ երբ կարդանք Երգ-Երգոցի Մեկ-
նութեան Յիշատակարանը, ինքզինքնիս կը
զտենք անձի մը առջեւ, որ ուսումնասէր
է եւ զարգացած, գիտէ դրել, տիրացած
է հայ լեզուին ու ծանօթ հայ լեզուով
զոյութիւն ունեցող երկասիրութեանց,
Ազաթանդեղոսի գրքին, Յաճախապատու-
մին, Եղիշէի, Վկայարանութեանց, Ոսկե-
բերանի, և Գր. Նաղիանդացիի գործերուն,
իրեն առաջնորդ ունի Գրիգոր Նիւսացիին,
սակայն ընթացիկ ու հարթ գրող մըն է,

չի յաջողիր դուռնադրել, պատկերոտ ը-
նել, խանդ գնել, բարձրանալ, հոգսորու-
թիւն ընել, ինչպէս նաեւ լեզուական ար-
ուեստակութիւններ. Երգ-Երգոցը մեծա-
պէս յարմար էր իր այլարանական ու
պատկերոտ եւ զգայնոտ ձեւով մղել մեկ-
նիչը դոնէ երանդաւորելու եւ պատկերոտ
ընելու իր խօսքը: Նարեկ Աղօթամատեա-
նին հեղինակը մեկնելով Երգ-Երգոցը ա-
պահովապէս մեր ձեռքը հասածէն տար-
բեր Մեկնութեան գիրք մը պիտի տար:
Հետեւաբար Երգ-Երգոցի Մեկնութիւնը
կարելի չէ նկատել ծնունդ Նարեկ Աղօ-
թամատեանի հեղինակին մտքին ու սրը-
տին, իրեն նման բանաստեղծի խառնը-
ւածքով ու արուեստաւորման խոր տրա-
մադրութեամբ օժտուած անձի մը: Երգ-
Երգոցի Մեկնութիւնը յօրինողն է Գրիգոր
քահանայ, Նարեկ գիւղէն, որդի Խոսրով
Անձեւացւոց եպիսկոպոսին:

Հ. Կ. ՔԵՊԱՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼՍՅՈՅ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅԻՆ

(Շար. տես «Բազմավէպ» 1960, թ. 11-12, էջ 288)

3. - Առաւօտեան ժամ. — ա) Մաքե-
նեաց Խրատները Առաւօտեան պաշտա-
մունքը կը յարեն Գիշերայինին՝ առանց
վերստին «Օրհնեա տէր» ըսելու: Գր.
Սկեւոացին կ'իմացնէ՝ թէ երբ Գիշերա-
յինը զանց կ'ըլլար, այն ժամանակ Առա-
ւօտեան սկիզբը «տան զՕրհնեա տէրն»
(415): Խրատները ունին զուրդաներու
բաժանումն ալ, որ բաւական կը տարբերի
Խոսրովի նշանակածէն, եւ է այսպէս. «Ի
վճար զորոգային՝ այն որ զգորգայն սկը-
սաւ, զՓառքն ասէ, եւ միւս ընկերն ասէ
զԱյծմ եւ միշտն, եւ զԱմէն թողու: Սար-

կաւազն առնթեր կայով՝ ասէ. եւ եւս
խաղաղութեան: Դպիրն՝ կեցո տէր: Ժո-
ղովուրդն՝ Տէր ողորմեա: Սարկաւազն
ասէ. Արքեմեա տէր այս ամուսն: Եւ նա
ասէ. Արքեմութիւն եւ փառք Հաւր: Սար-
կաւազն ասէ. Արքեմեա տէր: Եպիսկո-
պոսն ասէ. Խաղաղութիւն ամենեցուն:
Սաղմոսերգուն՝ որ զԱյծմ եւ միշտն ա-
սաց, ասէ. Ամէն եւ ընդ հոգւոյդ քուսն:
Եւ ապա սկսանի զսաղմոսն» կամ յաջորդ
զուրդան: Զարմանալի է՝ որ այս հրա-
հանգը կու տայ Առաւօտեան կանոննե-
րուն մէջ, ուր Խոսրով Գիշերայիններուն

հետ կապած է: Կը կարծեմ թէ սահմանը
նոյն է բոլոր կանոններուն համար, եւ
պատահաբար ինկած Առաւօտուն:

բ) Ս. Ղազարու երկաթաղի Ճշդոցին
(թ. 169) Դանիէլը, 1284ի ժամագրքին
Առաջարանը, անոր յարակից խրատները
(Յաւ. Գ, 3) եւ Մարիունի աղօթամատոյ-
ցը Հարցը կը բաժնեն վեց մասերու. Օրի-
նեալ եւ տէր, Վասն Աքրահաւու, Օրի-
նեալ եւ դու տէր. — Օրինեցէք ամենայն
գործք, Օրինեցէք տիւր, Օրինեցէք Խրա-
յէլ: Այս բաժանումը յայտնի էր ամէ-
նուն: Գործքին երեքը նաեւ նշանակուած
բաղմաթիւ շարականներու մէջ, եւ աւելի
պահոց, որով Գ. Տաթեւացին կրնար վը-
կայել՝ թէ «վեց փոխ է սաղմոսն այն»
(Հրց. 637): Ս. Ղազարու 1218ի Մաշտոցը
(թ. 199) ատոնց երրորդ փոխը կը կոչէ
«գիտքի Հարցն» Գործովքն հանդերձ:
Շարականին գործատունները — ինչպէս
կ'անուանէ Գր. Սկեւոացին՝ փոխին (415)
եւ Տաթեւացին՝ շարականի Գործքին տու-
ները (Ամբ. 336) — երբ յիշեալ բաժանու-
մէն աւելի ըլլային, ինչպէս է զոր օրինակ
Յարութեան Դ. Երկրորդ Հարցին հնգա-
տուն Գործքը, փոխին ուրիշ երկու ստո-
րաբաժանում ալ կ'ըլլար, որոնցմէ մէկը
ծանօթ է ինձի՝ «Օրհնեցէք աղբերք» տան
վրայ, որ նշանակուած իսկ է ինչ ինչ շա-
րականներու մէջ. զոր օրինակ Յովնանու
եւ պահոց Գ. Վեցերորդ Հարցերուն, որ
ունին կցորդս, «Աղբերք զտէր օրհնեցէք»:

Նկատեցինք շարականներու խառնումը
փոխերուն հետ, որոնց մէջ եւ Հարցին,
որուն հանդամանքը կը զտենք Տաթեւա-
ցիին քով. «Ամէն շարական, կ'ըսէ, կրկին
ասեմք. վասն է՞ր զՀարցն երեքկիմ ա-
սեմք... եւ Գործատունն կրկին ասի»: Եւ
կու տայ զանազան քմածին պատճառներ
(Հրց. 637), որ խնդրին հետ կապ չու-
նին: Երեցս կրկնութեան բնական պատ-
ճառն այս է՝ որ Հարցին համարներն ա-
ւելի շատ են. եւ անոնց մէջ պահելու բա-
ժանման հասարակաց չափն ու բաւեցնե-
լու համար շարականին տունները՝ կ'երեք-
կնէին առաջին մասին մէջ, ուր կրկնումը

բաւական էր Գործքին մէջ: Նոյն սովո-
րութիւնը կը յիշեցնէ եւ «Խրատք ժամոյ.
կարգաւորութեան», գրելով այսպէս.
«զհարցն ասեն զամէն տուն երեք անգամ»
եւ «Երկու անգամ ասի Գործատունն»:

գ) Տեսանք կանոնադրութիւն Փառերը,
որոնց հետ կան Մանրութեանց մէջ, սկը-
սեալ Դոնտոնի երեցադոյն օրինակէն
(1296ի) նաեւ «հարցնափառեր ապաշխա-
րութեան», նոյնպէս ութ ձայներու վրայ,
եւ իւրաքանչիւրն այլ եւ այլ տուններով,
ընդհանրապէս թուով վեց: Հարցն աւար-
տելուն՝ ատոնցմէ կ'երգէին մաս մը: Օ-
չինի ժամագիրքը զանոնք զետեղած է յետ
թ ժամուն: Ահա անոնց առաջին տունն
իր օրինակ. «Հայր երկնաւոր, որ առա-
քեցեր զմիւսին որդիդ քո փրկիչ աշխար-
հի, բաշխելով զՀոգւոյդ սրբոյ շնորհս,
եւ միաձայնեալ ընդ անմարմին զաւրու-
թիւնան, հանցուք աւրհնութիւն արարո-
ղիդ երկնի եւ երկրի, ասելով, Որ անդա-
դար փառ...»:

դ) 1284ի աղօթամատոյցը Հարցին յա-
ջորդ մաղթանքին մէջ փոփոխումներ ու-
նի: Յօդեա տէր մաղթանքին տուած է
այժմու մարտիրոսականին ձեւը, եւ կա-
պած «պահոց» հետ. «Մարտիրոսաց»
յատկացուցած է Աստուածածնի Ընկալ
տէր զաղաչանս (առանց քարոզին), որ
հոս առաջին անգամ կ'երեւի: Եւ «յարու-
թեան եւ յայտնութեան» տուեր է հզար
յաղքողը, անոր նախկին թերին լրացնե-
լով: Օչինինն ալ ունի Յօդեա միայն, եւ
Մարիունին՝ ատոր հետ նաեւ Հզարը:
Այդ անմիարանութեան մէջ զգալի է տեղ-
ւոյս անորոշ վիճակը ներկայ շրջանիս:

ե) Մաքենեաց Խրատները կը նշանակէ
«Մեծացուցէի... քարոզն եւ աղաթք»
լուր օրերուն, եւ 1284ի ժամագրքին մէջ
նշանակուած են այժմու ծանօթ Սուրբ
զԱստուածածինն եւ նախալիշեալ Ընկալ
տէր զաղաչանս. «զկնի Մեծացուցէին»:
Օչինը քարոզին եւ աղօթքին հետ զրած է
երգը՝ լուր օրերու պաշտամունքին մէջ,
որմէ զատած է կիրակիները, հոն ալ կըրկ-
նելով Մեծացուցէն՝ առանց քարոզին եւ

աղօթքին. ապացոյց՝ թէ այս վերջինները լուր օրերու յատուկ էին, կապուած միշտ երգին հետ: Նոյնպէս ունի եւ Մարիու-նին, կիրակի օրուան մասերը զատելով արձակ օրերէն: Հ. Չամչեան Մեծացու-ցէի հանապազօրոգութիւնը վերաբերեց Գրիգոր Անաւարդեցիին (1293-1307), ա-ռանց նշանակելու իր աղբիւրը (Գ, 290): Բայց այս տեղեկութիւնը կը հերքէ 1284ի ժամագիրքը, որ կանուխ է քան Անաւար-դեցին, եւ ունի արդէն նոյն ոճը: Շնոր-հալին, որ ատոր հակառակ վկայեց, կը դրէր իր եղբոր հայրապետութեան վերջին տարին: Իսկ Մաքենեաց Սրբաւորները առին ու տուին աղբիւր իր կաթողիկոսութեան շրջանին: Կրնար ուրեմն ինքն իսկ դրած ըլլալ այդ նորութիւնն անոր մէջ, նկատե-լով մանաւանդ յունական ամբաստանու-թիւնն ալ: Բայց աղբիւր ամբողջութեանէն ընդունուած չէր մինչեւ ժամանակ մը. այնպէս որ Կիրիկիա ունէր զայն. վկայ՝ 1284ի, Օշինի եւ Մարիուի ժամագրքերը՝ որ հոն գրուած են. մինչ Գր. Տաթեւացին 1397ին «Մեծացուցէն ի կիւրակէի» կը տեսնէր տակաւին Սիւնեաց մէջ (Հրց. 628), ուր շատ դանդաղօրէն կը հասնէին նորութիւնները: Բայց ասիկա արդէն մօտ էր հասնելու նաեւ հոն, որով 1405ին նոյն վարդապետը կրնար գրել՝ թէ «առաջինքն զՄեծացուցէն ի կիւրակէս ասէին, եւ արդ յամենայն աւուրս» (Սղմ. 510):

Երգին տուններն ալ կը խառնուէին իր շարականին հետ, ինչպէս ըսին Մաքե-նեաց Սրբաւորները: 1284ի Առաջաբանը կը բաժնէ փոխերը երեք մասերու. Մ. առա-ջին ութը տունները. Փ. Չաքարիայի ա-ռաջին ութը տունները. եւ Փ. ասոնց վեր-ջին երկուքը՝ միացած Սիմէոնի երկու տուններուն հետ: Ասոնց վրայ բաժնուած էին շարականին երեք տուններն ալ, որոն կիրառութեան մասին «Սրբաւոր ժողով. կարգաւորութեան» յետին աղբիւրը կու տայ հետեւեալ տեղեկութիւնը. «Երկու տունն երկու անգամ ասի, եւ յետի տու-նըն մի անգամ, քանզի յետի տունն Փառք տալով ասի, (եւ) Աւագ երիցու

դասն Այծմ եւ միշտ ասէ»: Այս հաշուով՝ փոխին իւրաքանչիւր չորս տան՝ մէկ տուն շարական կը վիճակի. առաջին եր-կուքը կրկնելի չորս քառեանկներուն հետ, եւ երրորդը՝ մէկ անգամ վերջին քառեա-կին հետ՝ հանդերձ Փառք Հօրով, եւ Այծմ եւ միշտը միւս դասին թողլով, զոր պի-տի տեսնենք Մանկունքին հետ եւս: Խը-րատները կը յարեն. «Իսկ ի կիրակէից՝ միայն (մէկ մի) տունն (շարականի) եր-կու երկու ասեն. եւ զՓառքն մի կողմանէ ասեն Աւագ երիցու դասէն, եւ զյետի տունն դարձեալ ասեն, որ աւագ երիցու դիհն երեք անգամ լինի ասացեալ յետի տունն Մեծացուցէին»: Իմաստն է՝ թէ շարականին վերջին տունը՝ զարտուղու-թեամբ լուր օրերէն՝ կ'երգուէր երեք ան-գամ. նախ փոխին յետին քառեանկին հետ. ապա Փառք Հօրին, եւ հուսկ Այծմ եւ միշ-տին հետ: Այս ձեւը սակայն հին չի թը-ւիր:

Գ) 1284ի Սրբաւորները ապաշխարութեան սաղմոսը կը կապէ իր շարականին հետ, այսպէս. «Ողորմեայն քսան տուն է. Ո-ղորմեա՛ առաջի տան (շարականին), Լը-սելի արա՛ միջի տան. Փրկեա զիս յարե-նէ՛ յետի տանն» (Յաւ. Գ. 3), եւ այդ երեք տուններուն վերջին վանկերը կը տեսնենք՝ օրինակի համար՝ պահոց Բկ. առաջին Հարցին Ողորմեային վրայ, քիւնս իմ, տառապեալ, քեան քո: Սա եռատուն շարականին սահմանն է, որ թէ ինչպէս կը միանար փոխին հետ՝ տե-սանք: «Սրբաւոր. ժողով. կարգաւորու-թեան» եւս կը գրէ շարականիս համար՝ թէ «երկու անգամ ասի (իւրաքանչիւր) տունն, եւ Փառքն լման, Այծմ եւ միշ-տովն». այսինքն միացեալ իրարու, որու պատճառը բացատրեցինք: 1284ի Սրբա-ւորները կը յարեն. «Երբ վեց տուն լինի (շա-րականն), չորս տունն երկու երկու ասա, եւ զայն մի մի: Երբ հինգ տուն լինի, երկու երկու ասա» բոլորն ալ: Եւ երկու պարագային եւս ունինք տասը տուն, որ կը պահանջէ քսան սաղմոսներու նոր բա-ժանում մը զոյգ զոյգ թիւով:

Է) Ողորմեա-ին յաջորդող Երկրպա-գեմք քարոզը, որ Սոսորովի քով առ Աստ-ուած ուղղուած է աղօթական ձեւով, նը-ման այժմուս, եւ մեկնիչը կ'ըսէ՝ թէ «ընդ Աստուած խօսի», ընդհակառակն 1284ի ժամագրքին մէջ քարոզի ձեւ ա-ռած է՝ խօսելով ժողովրդեան. «Երկրպա-գեսցուք տեառն Աստուծոյ մերոյ... մա-տուցուք... զտէր օրհնեսցուք եւ փա-ռաւորեսցուք եւ զնմանէ գոհացարուք» եւ այլն: Ուրեմն Անձեւացիէն վերջ կրած է այդ փոփոխութիւնը, որ կ'երեւի նաեւ Օշինի, Մարիուի եւ Ս. Ղազարու թ. 816 ժամագրքին մէջ, եւ որ տակաւ մոռ-ցուեցաւ. եւ Տաթեւացին 1397ին կը վը-կայէր՝ թէ «Երկրպագեմքն... եւ յերե-կոյն զՀասեալքս ի ժամն, աղօթից ձեւով ասէ սարկաւազն» (Հրց. 626): Նոյնպէս ըլլալու էր եւ 1375ի պակասաւոր ժամա-գրքին մէջ, դատելով Հասեալքս-էն, եւ նոյնպէս է 1465ի, 1598ի եւ այլ օրինակ-ներուն մէջ եւս:

Ը) 1284ին ունի այս առաջին անգամ. «Այ. յար. Ողորմած գրած ճշմարիտ, որ դեռ կը պակսի Օշինի օրինակին մէջ, եւ կայ Մարիուի եւ յաջորդներու մէջ. 1284ին ունի նաեւ Պահոց «Ողորմու-թեամբ եւ գրութեամբ քո» մաղթանքը, նախկին ձեւէն նորին դարձած, ինչպէս կը կարդանք Օշինի, Մարիուի եւ միւս օ-րինակներուն մէջ:

Ք) 1284ի Առաջաբանը, Սրբաւոր շարա-կանացը (Յաւ. Գ. 3) եւ Մարիուի ժա-մագրքը կը բաժնեն Տէր յերկնիցը՝ զինք կազմող երեք սաղմոսներուն վրայ, եւ Սրբաւոր զայն կը կապէ իր շարականին հետ՝ այսպէս. «Տէր յերկնից առջի տանն, Արքիմեցէ՛ գտէր միջի տանն, Արքիմեցէ՛ զԱստուած յետնոյն»: Մէկ ե-ռատուն շարականի բաժանումն է այս, որու մասին խօսեցանք: Սրբաւոր կը յա-ւելու. «Երբ շարականն երկու (լինի), զառաջի տունն ու զյետին՝ երեք, ու զայն երկու երկու» ըսէ: Այդ տեղ կ'ու-նենանք 14 տուն շարական, որոնց փոխին 28 տունները բաւելու համար՝ բաժնուելու

են 14 զոյգի: Կը հետեւի՝ որ երկու եռա-տուն Տէր յերկնիցները՝ որ կը գտնուին զլիաւորապէս յարութեան հարցերու ե-տեւ, միասին կ'երգուէին: Մաքենեաց Սրբաւորները կու տան այս հետաքրքրական տեղեկութիւնն ալ. «Զտէր յերկնիցն ա-շակերտի դասն սկսանի բարձրաձայն, ինչպէս երբեմն. Մեծացուցէն եւ Ողոր-մեայն ցած պիտի»: Սրբաւորները կը գտնէ (163), թէ եւ իր ախորժածն անձա՛ կրկնութիւն մ'էր լուկ, առաջին դէմքն երրորդի փոխուած: Կը գրէ դարձեալ՝ թէ երգիս առաջին մասն աւարտելուն, «հանդիստ պարտ է առնել եւ երկար միջոցաւ դադարել», ուր ընդ-հակառակն կային մարդիկ՝ որ «զվերջին բան աղօթիցս ի հետակայ բանիցդ սկիզբն խառնեն» ըսելով. «Տէր եւ Հոգիդ սուրբ եւ ի փառս Աստուած ընդ Հօր եւ ընդ Որդ-ւոյ՝ օրհնիս այսօր եւ յամենայն ժամ», եւ այլն (վերջին երեք բառերն երկրորդ մասին սկիզբն են), ինչպէս ունի Մա-րիուի աղօթամատոյցն ալ. եւ կամ «Տէր եւ Հոգիդ սուրբ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն. եւ յամենայն ժամ» շարունա-կաբար, զոր կը դատապարտէ, եւ կ'ուզէ՝ որ երբ «զԱմենն ասէ, միջոց եւ հանդիստ արարեալ՝ փոքր ինչ լուրթեամբ դադա-րեսցէ» (194-6):

Յետ աւարտելու Փառք ի բարձունսն-ը ատենի մէջ, Մաքենեաց Սրբաւորները կ'ու-ղեն՝ որ նաեւ «զՅարութիւն եւ զառաւօ-տու երգն յատեանն սկսանին, եւ ասեն զառաջի տներն», եւ ապա դաս կը մտնեն:

Ժա) Առաւօտեան քարոզները բազմա-ցած են այժմ 1284ի ժամագրքին մէջ, - զորս ունին Օշինին ու Մարիուիին ալ, - ուր կան նախ «Քարոզ կիւրակէի. Ասա-ցուք ամենեքեան միաբանութեամբ» այժ-մու չափով. եւ երգելի ըստ ութը ձայնե-րու, ինչպէս նշանակած են զայն Մանր-

ուսմունք (Արևելահայերու եւ Իւզարերից երգերու ներքեւ)։ Ապա «քարոզ Առաքելոց»։ Աստուած մեծ հոգոր»՝ հինգ սեպհական տուններով։ «Հայրապետաց»։ Առաջնորդի եղբն»՝ երկու յատուկ տուններով։ «Մարտիրոսաց»։ Զնգունքիւն սրբաբոց»՝ հինգ առանձին տուններով, եւ երեք յաւելուածականով, որոնք անշուշտ կը յարէին նաեւ նախորդներուն, պատշաճելով բոլորին, ինչպէս կը զգացնէ Ս. Ղազարու 1598ի ժամագիրքն առաջին անգամ, Աստուած մեծին վերջը զնկելով Բաբե. որ է յաւելուածականներուն առաջինը, «Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին», եւ յաջորդները։ 1284ինը ունի նաեւ «Ծննդեան. Մայր սուրբ՝ աշխմեան տասը տուններով, որոնց վրայ Օշինը կը գրէ՝ «Ծննդի եւ Աստուածածնին», եւ Մարիունին՝ «Ծննդի եւ Փոխման Աստուածածնին»։ Իրեւն պատասխան այս քարոզներուն, Մարիունինը Աստուած մեծին առաջին տան ետեւ կը գրէ. «Լուր տէր եւ ողորմեա»։ Օշինինը նոյնը կըրկնած է Մայր սուրբին հետ եւս։ Նոյն է անշուշտ միւս քարոզներուն քով ալ, զոր այդ եւ միւս օրինակներն անյիշատակ թողած են համառօտութեան համար, եւ վերջին կցորդներու պատասխաններու համար լուրեայն յղելով՝ հին քարոզներուն։

Իսկ հին փառաւորեցութիւնը, երբեմն հանապազօրեայ, նոյն ժամագրքերն յատկացուցած են «Պահոց» կամ «Ապաշխարութեան»։ Գիտելի է նաեւ՝ որ այս քարոզներն ալ եղանակաւոր էին, եւ խաղով զրուած են 1284ի, թ. 252, Մարիունի, Մեծօփեցիի եւ այլ աղօթամատոյցներու մէջ։ Մարիունին եւ թ. 252 Ասացուիին Յաղագս եղբարց տան զիմաց կը գրեն փոխ. ապացոյց՝ թէ եղանակը կը փոխուէր ալլատեղ։

Ապահով ենք՝ թէ նախորդ շրջանին ղեռնակին առնք, ապա թէ ոչ՝ խորով ա-

ռոնք ալ պիտի մեկնէր միւս քարոզներուն հետ, իր մեկնութեան նիւթ ունենալով բոլոր «քարոզութիւնք եւ աղօթք» (7)։ Ատոր համար լուրեամբ անցան առնք վրայէն Յ. Իմաստասէր եւ Ստ. Սիւնեցին եւս։ Ասացուի կը յիշեցնէ հին սովորութիւնն աղօթելու «Վասն ամենեցուն»։ Հ. Գաթրճեան յետ յոյց տալու այժմու քարոզին գրեթէ հաւասարութիւնն Առաք. Սահմանադրութեանց պատարգին մէջ պահածին հետ, համարեցաւ՝ թէ Յ. Մանգակունին խառնած ըլլայ զայն մեր հասարակաց աղօթքին մէջ¹, ինչ որ անկարելի է։ Փոքր ի շատէ նման է նաեւ Բարսեղեան եւ Ոսկերեանեան պատարգներու քարոզին², որոնք սակայն ստորին ժամանակներու թարգմանութիւններ են. եւ աւելի աննման յոյն ժամագրքին պահածին։ Մերինը առնք կամ նմաններու հայացած ձեւն է։ Յունական ժամագրքին մէջ կ'ըսուի ամէն օր, Միջագիշերի եւ Հանգստեան ժամերուն, մինչ մերինը սկիզբէն կապուած է տէրունական օրերուն եւ Առաւօտեան եւ երեկոյի պաշտամունքին հետ։ Իր մէջ յիշուած «Վասն հայրապետին մերոյ»՝ կաթողիկոսն էր, ինչպէս կը զգացնէ Օշինի ժամագիրքը, յայտնապէս տալով ժամանակակցին անունը «տեառն Կոստանդնի կենաց» (43)։

Ժբ) Մաքենեաց Խրատները նոյնպէս կը նշանակեն հոս «քարոզ (յիշեալներէն մին) եւ գանձ»։ Վերջիններս նոյն քարոզներուն նման արձակ երգեր էին, որոնց առաջին գրիչ կը թուի Գրիգոր Նարեկացին՝ իր երեք տասնատուն շարադրածներով, որ կը սկսին նոյն բառով՝ որ երգին անունը կազմեց. «Գանձ լուսոյ փառակից որդւոյ անճառ զօրութիւն» եւ այլն. եւ կ'աւարտին՝ «աղաչեմք» կամ «խնդրեմք»³։ Իրեն հետեւեցան եւ ուրիշներ։ Ասոնք «քարոզ» ալ կը կոչուին զրազիրներու մէջ։ Թէ ասոնք կը կիրարկուէին այս շրջանիս, կը

զգացնէ 1284ի Աւետարանացոյցը, Զատիկի առաւօտուն գրելով՝ «քարոզ ժողովեալքն»։ Նոյնպէս եւ Կիրակոս յիշելով Շնորհալին Գանձերը, կը յաւելու. «որպէս Նարեկացին (արար) զՀոգւոյն Գալստեան եւ զԵկեղեցւոյ եւ զսուրբ Խաչին» (68), որոնք ուրեմն կը գործածուէին նոյնպէս։ Գէորգ Ալեւոացին եւս «առնէր գանձս յոլովս տօնից տերունականաց եւ սրբոց Աստուծոյ»՝ ըստ իւր աշակերտին Մովսիսի⁴։ Մաքենեաց Խրատներուն խօսքը, ուրեմն, պէտք է իմանալ հանդիսական տօներուն համար։ Չենք կարող համոզուիլ՝ որ այս երգերը Նարեկացիին օրերէն արդէն մտան պաշտամունքին մէջ, երբ նկատենք զանգաղութիւնը՝ որով նոր շարադրութիւնները կ'ընդունուէին եկեղեցւոյ մէջ։ Սակայն ներկայ չըջանք կը տեսնէր արդէն զանոնք կիրարկութեան մէջ, որով նորեր ալ աւելցուց անոնց վրայ։ Մաքենեաց Խրատները հոս կը յարեն՝ թէ «Մաղթանքն հասարակաց է», բայց առանձին մաղթանք գոյութիւն չունի այս տեղ, եթէ ոչ քարոզներու կամ գանձերու պատասխանները՝ զոր ժողովուրդը կու տար։

Ժգ) Գոհանամբ գէլն աղօթքը կը վերջանար նախապէս՝ լիցուք տաճար եւ բնակարան սրբոյ Երրորդութեանդ, եւ գոհանալով փառաւորեցութեան գէլայր եւ գոյգի եւ գուրք Հոգիդ այժմ...», ինչպէս կը կարգանք Անձեւացիին քով (ըստ զրազիրներու)։ Որովհետեւ Երեքսրբեան երգի մասին, որ կը յաջորդէր այս աղօթքին, վէճ կար Հայոց եւ Յունաց մէջ՝ որ խաչեցարին պատճառաւ, որպէսզի ի դէմս Երրորդութեան զազափարը բոլորովին հեռու մնար, Ստոյ 1246ի ժողովը նախազահութեամբ Կոստանդին Ա.ի, հրամայեց ուղղել աղօթքին վերջաբանը առ Յիսուս այսպէս. «Լիցին տաճար եւ բնակարան աստուածային շնորհացդ, եւ գոհութեամբ փառաւորեցութեանդ զքեզ ընդ Հօր, եւ այլն, եւ Երեկոյի Լուր ձայնիցը, «զոր միշտ ի

շարժունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ՝ Քրիստոս Աստուած մեր, այժմ եւ միշտ», ինչպէս կը գրէ Կիրակոս (173), եւ ունի 1284ի Կիրիկեան ժամագիրքն ալ առաջին անգամ։

Ժդ) «Ի կիւրակի առաւօտուն, կ'ըսեն Մաքենեաց Խրատները, ի Սուրբ Աստուածին միաբան յատեանն երանեն», տարբերութեամբ լուր օրերուն՝ երբ դասին մէջ կ'երգուէր։ Տեսանք նաեւ ուղղուած ի դէմս Քրիստոսի՝ «որ խաչեցար վասն մեր» յաւելուածով։ Այդ միակ ձեւը կը բաղմապատկուի ԺԱ. դարու մօտերը, զատելով Պօղոս Տարօնեցիի վկայութեանէն, որ 1101ին կը գրէ այսպէս. «Արդ մեք յամենայն տնօրէնութեանն Քրիստոսի զնոյնս երգեմք. եւ յաւուր Յայտնութեանն երգեմք՝ որ յայտնեցար վասն մեր։ ... Եւ յաւուր մեծի խաչելութեանն ... որ խաչեցար։ ... Նոյնպէս եւ Յարութեանն գլարութիւնն երգեմք. եւ զշամբարձմանն զնոյն ասեմք» (257)։ Աւելի ուշ՝ վարդապետական ճշդութեան նպատակով եղան եւ ուրիշ փոփոխումներ. Ն. Լամբրոնացին կը գրէ՝ «որ մարմնացար եւ խաչեցար» (Պտր. 313). եւ Սիսի 1307ի ժողովը ձեւեց այսպէս. «սուրբ եւ անմահ Քրիստոս որ խաչեցար»⁵. Բայց չարմատացան. մանաւանդ թէ Տաթեւացին իր խելով այս վերջինը համարեցաւ «Քաղկեդոնին» (Հրց. 435), որ ընդհակառակն՝ Երրորդութեան կ'երգէր զայն։

Ժե) Յետ այս սրբերգութեան Մաքենեաց Խրատները ունին իրր նորութիւն քարոզ, «Վասն լսելի լինելն եւ Արիմուրիւն եւ փառքն», որ կան Օշինի եւ Մարիունի ժամագիրքներուն մէջ եւս։ 1284ինը ունի քարոզը, բայց Օրինութիւնը պակաս է, թերեւս մոռացութեամբ։ Նոյնը, Օշինին, թ. 152, 1465ին եւ ուրիշներ քարոզին սկիզբը կը յաւելուն նաեւ «Եւ եւս խաղաղութեան», որ հաստատուն կը մնայ այնուհետեւ։

Ժզ) Մանկունքին փոխին շարականի հետ

1 Պատարգամատոյցը Հայոց, 30-2, 40-1, 115:
2 Անդ. 183, 357:

3 Նարեկ. Մատեն. 455-63:

4 Հայագատում, 505:

5 Պալճեան, Պտմ. Կթդ. վարդ. 274:

խառնումը չեն յիշած ժամանակին Սրատոնները: Բայց այն՝ թէ փոխին եւ շարակաւնին տուններով ու տեղով հաւասար էր Համբարձին, որու խառնումին կերպն ունինք հոս, եւ որուն հաւասար էր սա, ինչպէս նկարագրած է աւելի ուշ «Սրատք ժամատեղաց կարգաւորութեան» այսպէս. «Սա նման Մեծացուցէին երկու տունն միայն երկու երկու ասի. այլ յետի տանն Փառք տայ եւ ասէ աւագերեցու դասն. եւ միւս դասն Այծմ եւ միշտ ասէ եւ զտունն, այսպէս ամենայն Մանկանց, թէ սրբոց եւ թէ պահոց եւ թէ խաչի»: Բայց հոգ հեռացած են ժամանակիս ուճէն, որ վերջին տունը կը կապէ Փառք Հօրին հետ, եւ Այծմ եւ միշտն առանձին կը թողու: Այս կը հաստատէ Մարտիրոսաց Գկ. Մանկունքն ալ, որու վերջին տան առջեւ կայ նշանակուած Փառքին վերջին բառերը՝ «սրբոյ Հոգւոյն», որով Այծմն ետեւ կ'անցնէր: Նոյնպէս էր տաւալին եւ Տաթեւացիին օրով: Բազմատուն Օրհնութիւններուն փոխին հետ խառնումին զփռուարութիւնը՝ զոր նկատեցինք, կը հանդիպի երբեմն բազմատուն Մանկունքներուն ալ, ինչպէս է Ղեւոնդեանց Աննաթիւն, որ նոյնպէս ճշգրտութեան կը կարօտի:

ԺԵ) Մաքենեաց Սրատները, «յետ Մանկանց՝ աղօթք» մը կը դնէ, որ Սուրբ Եստէր Աստուածն է 1284ի, Օշինի եւ Մարիունի ժամագրքերուն մէջ, որոնք ատկէ առաջ կը դնեն վասն խաղաղութեան քարոզն ալ: Դիտելի է որ Մովսէս Եղնկացին եւս, որ 1255ին կը մեկնէր այդ աղօթքը (223), այդ քարոզին վրայէն լռութեամբ անցաւ. եւ հաւանորէն դեռ չկար Մեծ Հայքի մէջ: Բայց ծագումով ժամանակակից ըլլալու է աղօթքին, որ կը պահանջէր իր քարոզը՝ ըստ կազմութեան մեր պաշտամունքին:

ԺԶ) Նոյն Սրատները աղօթքէն վերջ կը դնէ. «Իսկ աղուհացիցն՝ զՏէր ամենակալն»: Մենք տեսանք՝ որ նախապէս լոկ երեկոյ կ'ըսուէր այս աղօթքը. այնպէս որ հոս առաջին անգամ կը յիշուի Առա-

ւատուն: Ընդհակառակն 1286ի եւ թ. 252 ժամագրքը կը շարունակեն պահել նախկին ձեւը, իրաւունք տալով մեզի խորհիլ՝ թէ Մաքենեաց Սրատներուն սահմանաւելի քան տեղական, յետամուտ ըլլալու է մեր գրչագրին մէջ:

ԺԲ) 1284ի ժամագրքը հոս կը նշանակէ «Սաղմ. պահոց. Բանից իմոց (Ե), Լցաք առաւօտու (ԺԹ. 131), Ի խորոց կարգացի (ՃԻԹ), Լսելի արա ինձ (ՃՈԲ, 9), Աստուած յանուն քո» (ԾԳ), որ է այժմու չափով: Ինչպէս ունին Օշինին եւ Մարիունին: Նախ քան ասոնք Մաքենեաց Սրատներն ալ կը գրեն. «գինի Սուրբ Եստէրին զսաղմոսն սկսանի աշակերտի դասն», իմանալով անշուշտ նոյն խմբակը, որոնցմէ Բանից իմոց կար արդէն Ս. Բարսղի օրով Առաւօտեան աղօթքին մէջ, բայց անծանօթ էր Հայոց: Ունէր զայն յունական ժամագրքն ալ Արեւադալին մէջ, եւ ուրիշ սաղմոսներու հետ, որով նոյնպէս չէր կարող աղբիւր ըլլալ մեր աղօթամատոյցին:

Ի) Մաքենեաց Սրատները տօնական օրերուն յետ վերջին Աւետարանին կը դնէ Արարչականը, շարագրութիւն Շնորհալիին՝ շարթուան օրերու թիւով ու խորհուրդով, «Երկուշաբթին աւուր արարչութեան եւ զարաց հրեշտակաց. Ներս». ինչ որ ամէն օրերու յատուկ կը թուի: Օշինը կիրակի օրը յետ բժշկութեան աւետարանին կը նշանակէ Նորաստեղծեալը (24). Իսկ լուր օրերուն դրած է միւսները՝ պաշտամունքի վերջը, յետ սրբոց Որ ընտրեցեք աղօթքին (20): Կ'երեւի՝ թէ հոգ էր իր տեղն այդ ժամանակ:

Խա) 1284ի ժամագրքը կը շարունակէ պահոց կարգը. յետ սաղմոսին տալով Աղաչեցումք գամեմակալն քարոզը եւ Աւգմեա մեզ աղօթքը, որ ծանօթ էին Մովսէս Եղնկացիին ալ 1255ին (132): Ասոնց կը յարէ Յիշեա տէր գո պաշտօնեայս եւ Բարեբար եւ բազումպար, զոր կրկնած է յաջորդ հինգ ժամերուն եւս: Բ. կեղծ Օձնեցին ալ կը յիշէ նոյնը Երեկոյին, ը-

սելով թէ «Ժողովուրդն զքահանայն տէր անուանելով, աղաչէ յիշել յաղօթան զպաշտօնեայն ըստ հոգւոյ: ... Իսկ նա համառօտելով ասէ. Յիշեա զամենայն հաւատացեալս ի քեզ» եւ այլն (114): Քարող, Աղօթք եւ այս վերջինս կան նաեւ Օշինի, Մարիունի եւ միւս ժամագրքերուն մէջ: Թ. 252 օրինակն Յիշեա տէրը կը համարի «Մարկաւազ վարդապետին ասացեալ», զոր կրկնեց ապա Մեծփեցին եւ ուրիշներ եւս: Որքան եւ վստահելի չըլլան այսպիսի յատկացումներ, բայց կեղծ Օձնեցին մօտ էր Սարկաւազին, եւ երեցագոյն ժամագրքերուն հետ կ'ապահովէ ատոր հնութիւնը նախ քան Յովհաննէս Պլուզ (Եղնկացին), որուն կը վերագրէր ասիկա իր Պատմութեան մէջ՝ Արարահամ Գ. Կաթողիկոս, ԺԸ. դարուն (105). թէ այս աղօթքը մեծ հնութիւն մը չունի, յայտնի է Մովսէս Եղնկացիի լռութեանն ալ, որուն կրնայ նաեւ անծանօթ ըլլալ:

ԻԲ) Մեր երեցագոյն աղօթամատոյցը կու տայ նաեւ սուրբերու կարգը. գրելով՝ «Մարտիր. Սիրեցի գի լուիցէ (ՃԺԴ), Հաւատացի (ՃԺԵ), Աւրհնեցէք (ՃԺԶ), Աստուած յանուն (ԾԳ)», ինչպէս ունին Մարիունին եւ ուրիշներ եւս. Բանից, իմոց խմբակը, թուով եւ միւսներն ձեռքէ կարգուած է յայտնապէս: 1284ի օրինակն ատոր կը յարէ քարող Սուրբ Բգմաւորացն, եւ աղօթք «Հայրապ. Առ. Որ ընտրեցեք» եւ «Մարտ. Պապիչ սրբոց», երկուքին ալ յարելով Յիշեա տէրը, որոնք ամբողջութեամբ կան եւ Օշինի եւ Մարիունի գրչագրերուն մէջ: Այդ քարողը եւ երկու աղօթքները տեսաւ ու մեկնեց նաեւ Մովս. Եղնկացին 1255ին (225-231): 1284ի ժամագրքը ունի եւ կիրակի օրուան Խնդրեցումք քարոզն ու Քուս աւեմագոր աղօթքը, որ կը պահուին Եղնկացիին քով, եւ որոնց կ'աղանակեն Մաքենեաց Սրատները, ընդ մէջ քարողին եւ աղօթքին դնելով Կեցո տէր եւ Տէր ողորմեա եւս, որ կան ապա եւ Օշինի քով:

ԻԳ) Այս շրջանիս կը հանդիպինք նաեւ

բժշկութեան աւետարանին, որ կը կարգացուի յետ հին Եղիցի սաղմոսին, ուր կը պահուէր երբեմն: Վարդան վարդապետ՝ ԺԳ. դարուն՝ կը պահանջէ կիրակի օր «գերկու աւետարանին ձայն» լսել բոլոր հաւատացելոց: Գիշերի հին աւետարանն ջնջուած էր այժմ, եւ այլեւս չի յիշուիր: Ուրեմն Վարդանի առաջինն էր իւզարբերիցը, եւ երկրորդը՝ բժշկութեանը: Կար երրորդ մ'ալ, Կիրակոս Եղնկացիէն յիշուած միասնաբար, «գերեք փողոյն ձայն» որք են աւետարանն առաւօտուն» կիրակի օրուան (64). յանուանէ եւս ճշգրտած Սեպուհույ Սրատներուն մէջ. «Իւզարբերից աւետարանն... բժշկութեան աւետարանն... հանգստեան աւետարանն» (Յաւ. 2): Նոյնպէս ունին եւ Սրատք աւետարանաց. «Յոր գլուխ զիւզարբերից աւետարանն կարգաս, ի նոյն կարգա զառաւօտու բժշկութեանն եւ ըզհանգստեանն» (Յաւ. Ե, 2): «Կարգ մեկն. ժամու աղօթից» կը յիշէ անոնցմէ երկուքը. «Առաջին աւետարանն զառաւօտն գալուստն յայտնէ, եւ երկրորդն զհանդերձեալն» (311), որ են իւզարբերիցը ու հանգստեանը, որոնց հետ կապուած են այդ խորհուրդները:

Բժշկութեան աւետարաններու դանաղան քաղուածներ կան գրչագրերուն մէջ, որոնց բովանդակութիւնները անհաւասար են իրարու: Աւետարանի բոլոր բժշկական հատուածները ընթեռնելի էին. անոր համար իւրաքանչիւր ընդօրինակող կամ ստացող ժամագրքի՝ իր ուղած չափով եւ ընտրութեամբ կը քաղէր անոնցմէ: Այսպէս Օշինը ունի երկու երկու իւրաքանչիւր Աւետարանիչէն. Մարիունինը՝ մէկ մէկ. Ս. Ղազարու թ. 686 Ժողովածուն (1438էն) երկու երկու. եւ թ. 1372 (1480էն) մէկ մէկ: Եւ այդ կը տարբերէր մեծագոյն մասամբ տարբեր են իրարմէ եւս. որպէսզի համոզուինք՝ թէ ընթերցման համար որոշեալ աւետարաններ չկային:

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

